«ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՂԱԶԱԽԻ ԳԱՎԱՌԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, ՀՀ

Էլ. հասցե՝ vladimir.pogosyan@ysu.am

DOI: 10.24234/scientific.v2i47.164

ԱՄՓՈՓՈՒՄ

XIX դարավերջին և XX դարասկզբին Ռուսական կայրության հասարակական-քաղաքական գործընթացներին զուգընթացը դիտարկելի են նաև առօրեական կերպափոխությունները և այս հոդվածում փորձել ենք ուսումնասիրել Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հայության ինքնակառավարման առօրեականությունը՝ որպես սկզբնաղբյուր օգտագործելով «Մշակ» թերթում առկա տեղեկույթը:

«Մշակ»-ը այս ժամանակահատվածի ամենահեղինակավոր և տարածված մամուլի միջոցն էր, որի շնորհիվ կովկասահայությունը փորձում էր ոչ միայն ստանալ տեղեկատվություն, այլև մամուլի միջոցով հաղորդել իր ձեռքբերումների և կարևոր իրադարձությունների մասին: «Մշակ»-ը հանդիսանում էր գավառահայության ձայնը և նրա համարներում տպագրված գավառական նամականին և անդրադարձներն ունեն աղբյուրագիտական նշանակություն տվյալ ժամանակահատվածի կովկասահայության առօրեականության ուսումնասիրության և տարածաշրջանագիտության համար:

Հետազոտության օբեյեկտ է հանդիսացել XIX դարավերջի և XX դարասկզբի Ղազախի գավառի հայաբնակ գյուղերի առօրեականությունը, իսկ հետազոտության առարկան՝ ղազախահայ գյուղերի ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունների, ընտրությունների և պաշտոնեության նշանակման առօրեական խնդիրները: Հետազոտության նպատակն է համապարփակ ուսումնասիրության ենթարկել ղազախահայության գյուղական ինքնակառավարման համակարգի առօրեականությունը, որի շրջանակներում կարևորել ենք «Մշակ» թերթի աղբյուրագիտական նշանակությունը, բացահայտել ինքնակառավարման մարմինների կազմակերպման տեղական առանձնահատկությունները և լոկալ հանրույթի վերաբերմունքը ինքնակառավարման մարմինների, հերթական ընտրությունների նկատմամբ և մասնակցության ակտիվությունը այդ գործընթացում:

Գյուղական ինքնակառավարման համակարգը և նրա շուրջ զարգացումները համապատասխանում էին ժամանակի քաղաքական և տնտեսական հրամայականներին: Շինական ժողովներն ու դրանց ազդեցությունը գյուղական առօրեականության վրա անառարկելի է, քանի որ ժողովն էր իրականացնում համայնքի ինքնակառավարման բոլոր օղակների ձևավորումը, գյուղական կարևորագույն որոշումների կայացումը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղական առօրեականությունը ձևավորվում և շրջանառվում էր գլխավոր պաշտոնյաների՝ տանուտերի և նրա գրասենյակի շուրջ, որոնց աշխատանքի արդյունավետությունից էլ կախված էր գյուղական հասարակության վերաբերմունքը շինական ժողովների և ընտրված պաշտոնեության նկատմամբ:

Հիմնաբառեր՝ *առօրեականություն, շինական ժողով, գյուղական հասարակություն, մամուլի միջոցներ, «Մշակ», ինքնակառավարման մարմիններ, միկրոպատմություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարավային Կովկասը XIX դարից սկսած մաս էր կազմում Ռուսական կայսրությանը և ուղղակիորեն ենթարկվում կայսրության պրովինցյալ քաղաքականության «նրբերանգներին», որոնք կարող էին փոխակերպվել կամ հարմարեցվել տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, ինչպես նաև հասարակական ու մշակութային առանձնահատկություններից ելնելով: XIX դարավերջին և XX դարասկզբին կայսրության մաս կազմող ժամանակակից Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային միավորների, նրանց շուրջ ընթացող հասարակական, տնտեսական, միջէթնիկ գործընթացների ուսումնասիրության առումով ժամանակաշրջանի մամուլի միջոցները (թերթ, օրաթերթեր, լրագրեր) ունեն սկզբնաղբյուրային նշանակություն և հանդիսանում են հիշյալ ժամանակաշրջանի հասարակական-առօրեական գործընթացների ուսումնասիրություն յուրօրինակ շտեմարաններ (Thompson, 1990; Thompson, 1995), որտեղ հնչում է ոչ միայն գավառական մտավորականության ձայնը, այլև հստակորեն առանձնացվում են գյուղական բնակչության առօրեական հիմնախնդիրները, պատկերացումներն ու սովորույթները, հանրային և ավանդական միջավայրերի փոխակերպման հնարավորությունները (Лефевр, 2015): Որոշ հետազոտողների կարծիքով՝ մամուլը հանդես էր գալիս որպես անկախ ինստիտուտ, որ կանգնած էր մշակութային և սոցիալական հաստատությունների միջև և համակարգում էր նրանց փոխգործակցությունը (Hjarvard, 2008; Кирия, 2018; McChesney, 2015; Есин, 2008):

Հիշյալ ժամանակաշրջանի Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հայության առօրեական գործընթացների ու փոխակերպումների շուրջ «Մշակ» թերթի էջերում անթեղված նամակներն ու թղթակցությունները, իրապես, նոր լույս են սփռում ղազախահայության հիմնախնդիրների լուսաբանման, նոր տեղեկույթի ձևավորման, գիտական համադրման և տարածաշրջանի պատմության համար շատ հաճախ անհասանելի պատմական գիտելիքի

ձևավորման համար: Իր գոյության և հանրօգուտ առաքելության ավելի քան հիսնամյա ժամանակահատվածում (1872-1922) «Մշակը» ոչ միայն հանդիսանում էր գավառահայության մամուլի հիմնական միջոցը, այլև գավառային խնդիրների, տարակարծությունների արտահայտման հիմնական հարթակը: Ժամանակակից պատմագիտական և հարգիտական ուսումնասիրությունների իրականացման շրջանակներում կարևորում ենք տարածաշրջանային միկրոպատմությունների ուսումնասիրությունը, որոնց աղբյուրագիտական հենքն արդիական են դարձնում հիշյալ ժամանակաշրջանի առօրեական գործընթացների հետազոտությունը՝ հանրային խճանկարի պատմական փորձառությունը հնարավորին ամբողջացնելու տեսանկյունից:

Սույն հետազոտության նպատակն է տեսական և պատմագիտական գիտելիքի համադրմամբ համապարփակ ուսումնասիրության ենթարկել «Մշակ» թերթի թղթակցությունները՝ որպես ղազախահայության սոցիալական ինստիտուտների և առօրեական գործընթացների ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուր: Այս նպատակին հանելու համար խնդրադրել են՝ ուսումնասիրել «Մշակ» թերթի թղթակցություններն ու գավառական հոդվածները, առանձնացնել ղազախահայությանը (ներկայիս Տավուշի մարզ) վերաբերող լրագրային տեղեկույթը, բացահայտել գյուղական ինքնավարության կազմակերպման առօրեական առանձնահատկություններն ու նմանությունները:

Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին փորձերից մեկն է համակողմանիորեն ուսումնասիրելու արևելահայ գյուղական ինքնակառավարման մարմինների գործունեության առօրեականությունը՝ հիմնվել «Մշակ» թերթի և հրապարակում առկա գիտական գրականության վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով միջգիտակարգային հետազոտական ուղղություն՝ առօրեականության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համադրելու տարբեր մեթոդաբանական մոտեցումներ (ստրուկտուրալիզմի, ֆունկցիոնալիզմի սկզբունքներ), հետազոտական մի շարք մեթոդները՝ պատմա-համեմատական, համակարգային, համաժամանակյա և դիախրոնիկ վերլուծություն, որոնց օգնությամբ ամբողջանում են առօրեական հիմնախնդիրների տեղական և ընդհանրական կողմերը, պետություն-համայնք փոխազդեցությամբ պայմանավորված առօրեական առանձնահատկությունները: Ուսումնասիրության շրջանակում առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են մշակութային և պատմական մարդաբանության միջգիտակարգային սինթեզի մեթոդաբանական գործիքակազմը: Վերջինս հնարավորություն ընձեռեց ուսումնասիրել գյուղական ինքնակառավարման ինստիտուտները որպես գյուղական հանրության բոլոր ներկայացուցիչներին համախմբող համակարգ: Միկրո և մակրոպատմական

մոտեցումների համադրությունը հնարավորություն տվեց բացահայտել գյուղական ինքնակառավարման մարմինների զարգացման հիմնական միտումները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղազախահայության գյուղական ինքնակառավարման առօրեականությունը «Մշակ»-ի էջերում

XIX դարի 70-80-ական թվականներից անառարկելիորեն մեծացավ արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման գործում մեծ դեր խաղացած «Մշակ» թերթի հեղինակությունը, որը, ինչպես ընդգծում են պարբերական մամուլի հետազոտողները՝ «տարեգրեց հայ ժողովրդի զարգացման բուրժուադեմոկրատական շրջանը և կապիտալիստական հարաբերությունների մուտքը հայ իրականություն» (*Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր*, 2006; Տէր-Խաչատուրեան, 2014): «Մշակ» թերթը նոր խոսք և լրագրային մշակույթ բերեց արևելահայ իրականություն՝ հասարակությանը հաղորդակից դարձնելով լրագրային մշակույթին՝ եվրոպական մեդիամշակույթի (Հայոց պատմություն, 2015):

Իր հիսնամյա գործունեության և արևելահայության վրա ունեցած ազդեցությամբ «Մշակ»-ը վերածվեց հասարակության առօրեական օրակարգի ներկայացման, պարզաբանման, բացահայտման հիմնական միջոցի, տարաբնույթ անդրադարձներով վեր հանելով ոչ միայն թիֆլիսահայության խնդիրներն ու տարակարծությունները, այլև արևելահայ գավառի և գյուղի սոցիալական խնդիրները՝ «առաջադրելով գյուղափրկիչ» իր ծրագիրը: «Մշակ»-ի անաչառ լրատվամիջոցի վստահության ցուցիչ էր նաև այն հանգամանքը, որ գավառահայության ներկայացուցիչները պարբերաբար իրենց խնդիրներն ու կարևոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում էին թերթին՝ դառնալով յուրատեսակ գավառային թղթակիցներ, և ինչպես նշում են հետազոտողները, XIX դարավերջի և XX դարասկզբի ոչ մի թերթ չուներ «Մշակ»-ի չափ թղթակիցների բանակը (Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, 2006):

Հատկապես Ելիզավետպոլի նահանգի Ղազախ գավառի հայ բնակչության համար այն ուներ կարևոր տեղեկատուի նշանակություն և նրա էջերում տպագրված ավելի քանի հազար թղթակցությունները, անանուն նամակները, հայտարարությունները ոչ միայն լուսաբանում էին ղազախահայության տվյալ ժամանակահատվածի առօրեականությունը, այլև կարևոր սկզբնաղբյուր են հանդիսանում հետազոտողի համար՝ պետություն-ծայրամաս հարաբերությունների առօրեականության, գյուղական միջավայրի փոխակերպման, ավանդական արժեքների և նորագույն տեխնոլոգիաների մուտքը ուսումնասիրելու և հասարակական արձագանքները դիտարկելու համար:

Ղազախահայության կողմից «Մշակ»-ին ուղղված նամակների հիմնական մասն անդրադառնում էր գյուղական հասարակության այն առօրեական խնդիրների լուսաբանմանը, որոնք տեղական գյուղհասարակության կողմից դիտարկվում էին որպես կարևոր և առաջնային: Գյուղական հասարակության գրագետ ներկայացուցիչները թերթի էջերում կիսում էին իրենց ձեռբերումները, բացթողումները և հասարակական բացերն ու ավանդական արժեքների պահպանման/մերժման հեռանկարները:

Ավելի քան հազար նամակներում և տողային անդրադարձերում ներկայացված առօրեական նյութը հնարավորություն է տալիս այն խմբավորել ըստ առօրեականության կազմակերպման ոլորտների և ներկայացնել առանձնացված:

Առաջնակարգ ուշադրություն է դարձված համայնքային ինստիտուտների դերակատարմանը՝ որպես գյուղական առօրեականության անխախտության, հանրային համերաշխության պահպանման միջոց: Անդրադառնալով իրենց բնակավայրերին՝ գյուղհասարակության ներկայացուցիչներն առաջին հերթին փորձում էին հիմնավորել իրենց գյուղական աշխարհի կարևորությունը, տարածքային առանձնահատկությունները:

«*Եթէ հետազօտելու լինէինք ընդհանրապէս Ղազախու գաւառը նորա գիւղերի դիրքի վերաբերութեամբ, կը տեսնէինք, որ ըստ մեծի մասին բոլոր հայ գիւղերը շինված են՝ լեառներով շրջապատված, ամուր և մշակութեան անյարմար տեղուանքը, իսկ մնացեալ թուրքերի գիւղերը ընդհակառակ հիմնված են՝ դաշտավայր և գլխաւորապէս հողագործութեան յարմարաւոր տեղուանք*» (*Մշակ*, 1874):

Պարբերականի էջերը դառնում են յուրատեսակ միջոց՝ գավառահայության առօրեականության տարածությունը ձևավորելու, համեմատելու, ինչու չէ նաև գերագնահատելու համար և նամակագիրներից մեկը, անդրադառնալով իր բնակավայրի տարածականությանը՝ նշում է՝ «*մեր գյուղի Գոլովինսկիյ պրոսպեկտը սկսվում է Գևոյի դուքանի դռնից և ձգվում է մինչև Մաթոսանց տան դուռը*» (*Մշակ*, 1878):

Գյուղական կյանքի կազմակերպման առանձնահատկություններով հանդերձ՝ գյուղական բնակավայրը ենթարկվել է պետական կառավարման համակարգերին և իր տեղական մարմինների միջոցով իրականացրել պահանջարկված քաղաքականությունը, ավագանու և համայնքային պաշտոնյաների ընտրությունը: Այս գործընթացի պարբերական իրականացման մանրամասները թույլ են տալիս նշել, որ գյուղական հասարակությունը պահանջատեր է եղել իր պաշտոնյաների նկատմամբ, հաճախ նաև բացասական գնահատելով վերջիններիս իշխանազանցությունն ու չարաշահումները. «*Մեր գիւղն էլ ունի իր դատաւորը, այն զանազանութեամբ միայն, որ քաղաքի դատաւորները արդարութիւնը սեղանի վրա են բազմեցնում, իսկ մեզանում քոխվէն արդարութիւնը դատարանից դուրս է խռկում, և զանգատաւորներին շատ անգամ փողոցում կարմրած թշերով լսում*» (*Մշակ*, 1878):

Իսկ ի՞նչ իրավահասարակական պայմաններում և հանրային մասնակցությամբ էին տեղի ունենում համայնքային մարմինների ընտրություններն ու կառավարչական գործառությունների կազմակերպումը: Ռուսական կայսրության ներքին նահանգներում և ծայրագավառներում գյուղական համայնքների ինքնակառավարումն իրականացվում էր գյուղախմբի, իսկ տնտեսական հարցերը՝ գյուղական հասարակության միջոցով: Որպես վարչական ստորին միավոր՝ օրենքը ճանաչում էր գյուղախումբը, որը իր մեջ ներառում էր մեկ խոշոր գյուղական հասարակություն կամ մի քանի մանր գյուղեր, որը պետք է ունենար իր գյուղախմբային տանուտերը և դատավորները, ինչպես նաև ավագները: Ցանկացած կարգի վարչական գործերը կենտրոնանում էին գյուղախմբի ժողովի (Сход) և նրանց կողմից ընտրված տանուտերի ձեռքում: Քննարկելի էր նաև ժողովի կազմը՝ կամ յուրաքանչյուր ծխից մեկ ներկայացուցիչ (տղամարդ) (Кузнецов, 1998), կամ 10 ծխից՝ մեկ ներկայացուցիչ (Դավիթ Անանուն, 1916):

Նշենք, որ Անդրկովկասում գյուղական համայնքների կառավարչական կարգերի մասին օրենքը հրապարակվեց 1865 թվականին և կազմակերպման առումով հստակորեն տարբերվում էր Ռուսաստանի ներքին «երկաստիճան գյուղական կազմակերպման սկզբունքներից՝ գյուղական հասարակությունը՝ իբրև տնտեսական միավոր և գյուղախումբը՝ իբրև ստորին վարչական միավոր» (Դավիթ Անանուն, 1916): Գյուղացիական օրենսդրության որոշ կետերի հնարավորության սահմաններում Անդրկովկասյան նահանգային իշխանությունները իրականացրին տեղական գյուղախմբերի ձևավորում, որը կրում էր «չինական հասարակություն» կոչումը, իսկ մի գյուղի շրջանակներում ամփոփված չինական հասարակությունը, ընդհանուրից տարբերելու համար, ստացավ «մասնավոր հասարակութիւն» հորջորջումը (Դավիթ Անանուն, 1916): Ըստ ուսումնասիրողների, Անդրկովկասում ձևավորված ստորին վարչական միավորները միայն պաշտոնեական կոչումներով և երկրորդական կարգերի առկայությամբ էին տարբերվում ռուսականից: Ինչպես նշում է ժամանակի ռուսահայ իրականության խնդիրների հետազոտող Դավիթ Անանունը, «մեզ մոտ, օրինակ, չինական հասարակութիւնը ունի իր ընդհանուր տանուտէրը, իսկ այդ հասարակութեան անդամ-գիւղերը տանուտէրի օգնականներ՝ ռուսական ստարոստա-աւագների փոխարէն» (Դավիթ Անանուն, 1916): «Չինական հասարակության» և ռուսական գյուղախմբերի տարբերությունը նաև այն էր, որ անդրկովկասյան իրականության մեջ չինական ժողովը՝ «սխոդը» բաղկացած էր բոլոր ցուցակագրված ծխերի ներկայացուցիչներից, այսինքն մի քանի հարյուր, անգամ մի քանի հազար մարդկանցից, այնինչ ռուսական գյուղախմբի ժողովին մասնակցում էին ընտրված ներկայացուցիչներ (Դավիթ Անանուն, 1916): Չինական ժողովները հայ իրականության մեջ դառնում են բազմամարդ, չկարգաբերված և աղմկոտ հավաքներ, որոնք շատ հաճախ ավարտվում էին գյուղական հասարակության առանձին խմբերի միջև լարվածության ձևավորմամբ: Նման օրինակները բազմաթիվ են «Մշակ»-ի համարներում, երբ ղազախահայ հասարակությունը ձայն է բարձրացնում ընդդեմ տանուտիրական համակարգի.

«*Մեր գաւառի երկրորդ բաժնի տասներեք հայաբնակ գյուղերի տանուտէրերը իրենց վարչական անընդունակությամբ զզուանք են առաջացրել ժողովրդի մեջ: Ժողովրդի բարկութիւնը կատաղութեան է հասել: Գաւառի բազմամարդ հայաբնակ Կողբ գիւղի բազմամեայ անկանօն և խառն կառավարութիւնից զրգռված՝ ժողովուրդը պատռեց իր երեսի քօղը և 15 տարեկանից մինչև 70 ամեայ ծերունին աղաղակ բարձրացրեց գիւղական «քեօխվայի» և կեղեքիչ «եազիչների» և հարկահանների դեմ*» (*Մշակ*, 1897):

Չնայած շինական ժողովների պահանջարկվածությանը և գյուղական հասարակության մասնակցության իրավունք ունեցողների բազմաթվությանը՝ ժողովները միշտ չէ, որ ընթանում էին ամբողջ հասարակության մասնակցությամբ և տեղական ուժեղ խմբերին, որոնք հավաքվում էին բեկերի, աղաների կամ էլ հեղինակություն ունեցող գյուղական հարուստների շուրջ, հաջողվում էր հօգուտ իրենց օգտագործել ժողովի որոշումները, որի դեմ ևս ժամանակ առ ժամանակ հանդես էր գալիս գյուղական հասարակությունը: 1865 թվականի օրենսդրությամբ՝ շինական ժողովը, որ բաղկացած էր բոլոր ծխատերերից և ղեկավարվում էր տանուտերի կողմից, իրավասություն ուներ ընտրելու գյուղական պաշտոնյաներ, հեռացնելու համայնքի համար «վնասակար և արատաւոր անդամներին, նշանակել խնամակալներ և հոգաբարձուներ, քննել նրանց գործունէութիւնը, վերահասու լինել ընտանեկան բաժանումներին, կարգադրել հասարակական հողերը, խորհրդակցել հասարակութեան կարիքների մասին, զբաղուել արքունի և այլ տուրքերի բաշխման գործով և այլն» (Դավիթ Անանուն, 1916): Շինական ժողովում կայացված որոշումները համարվում էին օրինական (Росницкий, 1926), երբ հարցը շուրջ քննությունն իրականացվել էր տանուտերի ներկայությամբ և ընդունվել ծխատերերի մեծամասնության կամ առնվազն կեսից ավելիի (50+ տոկոսի) կողմից, իսկ առավել կարևոր նշանակության գործերի դեպքում պահանջվում էր ձայների 2/3-ը: Չնայած հաստատագրված օրենդրական համակարգին և գյուղական ինքնակառավարման ռեսուրսների առկայությանը՝ հասարակական գնահատականներում ժողովի որոշումներն ու ընտրությունները դիտարկվում էին որպես անօգտավետ, քանի որ «*վերջին տարիներիս տանուտէրներ են ընտրվում բոլորովին անընդունակ անձինք և օրէնքը մնում է միայն թղթի վրա գրած, ամեն բան կատարվում է հին ձևով, պատիժը ոչ թէ ըստ օրէնքի է կատարվում, այլ ըստ կամքի գիւղական աղաների*» (*Մշակ*, 1897): Գյուղական հասարակությունը գնահատում էր նրանց, ովքեր կյանքում հաջողությունների էին հասել իրենց աշխատանքով, հնարամտությամբ, գիտելիքով և հատկապես զարգացած, ուսյալ երիտասարդությանը պատվիրակում իր խնդիրների լուծումը՝ հույս հայտնելով, որ երիտասարդության այս մասը կարող է «*փշրել հին սիստեմը և ամեն բան հաշվի տակ դնել*» (*Մշակ*, 1897):

Գյուղական առօրեականության առանցքային կերպարը տանուտերն էր, որի անձը կարևորված էր գյուղական հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքում: Վերջինս ոչ միայն

վարչական կառավարիչ էր, այլև ոստիկանական պարտականություններ կատարող պաշտոնյա և միշտ չէ, որ ընտրված տանուտերի գործունեությունն արժանանում էր համագյուղացիների հավանությանը, շատ հաճախ վարչական կենտրոններ հղված զանազան բողոք-նամակների առկայության դեպքերում՝ տանուտերերի գործունեությունը ենթարկվում էր ստուգումների: Այսպիսի ստուգումների օրինակները բազմաթիվ են, որոնց արդյունքներով գյուղական տանուտերի գործունեությունը ստուգողների կողմից գնահատվում էին անբավարար, իսկ հասարակությունը՝ ներկայացնում իր հիասթափությունը՝ «*ժողովուրդը սաստիկ փոշմանել է դրան ընտրելուց*» (*Մշակ*, 1897):

Մամուլի էջերում նկատելի են նաև տանուտերի և դատավորների ընտրության հետաձգման և ընտրությունների մասին նախօրոք չհայտարարման, ինչպես նաև եռամյա պաշտոնավարման ժամկետը չլրացած տանուտերի լիազորությունների դադարեցման և նոր ընտրությունների նշանակման դեպքեր: 1897 թվականին Քարվանսարա շինական հասարակության տանուտերի և դատավորների ընտրության օրինակը տալիս է նման իրավիճակների առօրեական ընկալման գնահատականը:

«*Մեր տանուտէրին պաշտօնից հեռացնելուց յետոյ, գաւառապետը պաշտօնի կանչեց սրա օգնականին, որը բաւական լաւ էր կառավարում. բայց ինչպէս եղաւ, որ վերջինի ժամանակը չը լրացած, նոր ընտրութիւն եղաւ, մենք չը գիտենք: Հոկտեմբերի 11-ին նշանակած ընտրութեան մասին կանխօրէն չէր յայտնված ժողովրդին, որպէս զի կարելի լինէր նախապատրաստական ժողովներ կազմել և օրինաւոր մարդիկ առաջ քաշել տանուտէրութեան և դատաւորների պաշտօնի համար: Պրիստաւը եկաւ մեր գիւղը ամսի 10-ին, երեկոյեան ղէմ և առաւօտը վաղ կանչել տուեց մեր և Վերին-Աղդանի գիւղացիներին՝ նախկին դպրոցի դուռը: Երկու գիւղը կազմում են մի շինական հասարակութիւն: Բաց անելով ժողովը, պրիստաւը յայտնեց, որ պէտք է ընտրվեն նոր տանուտէր և դատաւորներ, իրանց օգնականներով*»: Նույն համարում հետաքրքիր որակումներ են տրվում բուն ընտրության գործընթացին՝ «*ղրոր-բրոր» ընկավ գյուղացիների մեջ*», «*իւրաքանչիւրն իր ընտրելիին էր առաջ քցում*», իսկ թեկնածուներ որոակվում են տարբեր բացասական հատկանիշներով՝ «միկիտանշիկ», «հանաքչի» (*Մշակ,* 1897): Միևնույն ժամանակ ընտրություններում ոչ ուսյալ անհատների առաջքաշումը բացատրվում է այն հանգամանքով, որ «*ժողովուրդը մի տեսակ կորցրեց իր հաւատը դէպի «ուսեալ» տանուտէրները և կրկին դիմեց անգրագէտներին*» (*Մշակ*, 1897):

«Մշակ»-ի հաջորդ համարներից մեկում կարդում ենք նաև պատասխան նամակը, որտեղ նամակագիրը նշում, որ նախորդ համարում գրվածը սուտ որակում է, որ «1) *գիւղի տանուտէրի և դատաւորների ընտրութեան մասին մէկ շաբաթ առաջ յայտնված է եղել ժողովրդին՝ տանուտէրի միջոցով. 2) մեր ինտելիգէնտ-տանուտէրին չեն հեռացրել, այլ ինքն է հիւանդութեան պատճառով հեռացել. նա խառնակիչ չի եղել, և եթէ առողջ լինէր, կը ծառայէր, և տանուտէրի նոր ընտրութիւն չէր լինի*» (*Մշակ,* 1898):

Վերոնշյալ մեջբերումներն ու անդրադարձները հիմք են տալիս նշելու, որ գյուղական առօրեականության գլխավոր մարմնի ու ինքնակառավարման գործառույթի իրականացնողների գործունեությունը գտնվում էր հասարակության ներկայացուցիչների ուշադրության ներքո, իսկ հերթական ընտրությունները միջոց էին ավելի ստացված, հաշվետվողական ինքնակառավարման մարմին ունենալու ճանապարհին: «Մշակ»-ի էջերում նմանօրինակ անդրադարձներն ունեն կարևոր և առանցքային նշանակություն ղազախահայության ինքնակառավարման մարմինների և տեղական պաշտոնեության շուրջ առօրեական պատկերացումն ամբողջացնելու տեսանկյունից և ուսումնասիրողին հնարավորություն են տալիս կենդանի գծերով պատկերելու հասարակական զգացումների և առօրեականության տվյալ ոլորտը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մամուլը, որպես XIX դարավերջի և XX դարասկզբի առօրեականության սկզբնաղբյուր, կարևոր նշանակություն ունի ժամանակի հանրային միտքն ու առաջնահարթությունները զանազանելու, պետություն-հասարակության փոխհարաբերությունների ընթացքը, ընդհանրական և տարածաշրջանային ձեռքբերումները գնահատելու տեսանկյունից: «Մշակ» թերթում տեղ գտած տարածաշրջանագիտական նամակներն ու հոդվածները ուսումնասիրողին հնարավորություն են տալիս վերականգնելու ժամանակի հանրային միտքը՝ կոնկրետ ոլորտայնությամբ և տարածաշրջանային դիտանկյունից: Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հայաբնակ գյուղերի առօրեական գործընթացների շուրջ պարբերական անդրադարձները թույլ են տալիս ուսումնասիրողին ոչ միայն ստանալ օբյեկտիվ տեղեկատվություն, այլև որոշակիացնելու գործընթացների ընկալումը, առանձնահատկությունները:

Գյուղական ինքնակառավարման մարմինները կարգավորում և ապահովում էին գյուղական առօրեականության անխախտությունը: Տանուտերի և տեղական դատավորների ընտրությունները և դրանց ընթացքը ցույց են տալիս գյուղական հասարակության վերաբերմունքը տեղական ինքնակառավարման մարմնի և նրա գործունեության նկատմամբ: Հանրային միջավայրի կենտրոնում ինքնակառավարման մարմնի ղեկավարի՝ տանուտիրոջ կերպարն էր, որի գործունեության արդյունավետությամբ էր որոշակիացվում տեղական ինքնակավարման մարմնի նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Իհարկե, գյուղական գիտակից անդամների ձգտումն էր ունենալ իր պաշտոնի նշանակությունն ու կոչումը գիտակցող պաշտոնյա, ով կարող էր պայքարել անկոչ բյուրոկրատների անտեղի միջամտության դեմ, որը, ցավոք, միշտ չէ, որ հաջողվում էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Դավիթ Անանուն, (1916): Ռուսահայերի հասարակական զարգացումը (1800-1870), հատոր առաջին, Բազու, Տրուդ.

Հայոց պատմություն, (2015) խմբ՝ Վ.Բարխուդարյանի, հատոր երրորդ, նոր ժամանակաշրջան, գիրք երկրորդ, Երևան, Զանգակ հրատ.

Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, (2006):, հատոր 1, Գահիրէ:

Մշակ (15.VIII.1874), 32.

Մշակ (8.XI.1878), 192.

Մշակ (6.XI.1897), 104.

Մշակ (2.XII.1897), 141.

Մշակ (30.X.1898), 197.

Տէր-Խաչատուրեան Ար., (2014): Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պեյրութ:

Кузнецов, С. В. (1998). Культура русской деревни. *Очерки русской культуры XIX века.–М.: изд. Московского университета. (1).*

Кирия, И. В. (2018). История и теория медиа [Электронный ресурс]: учебник для вузов / **Кирия И. В., Новикова А. А.** Нац. исслед. ун-т «Высшая школа экономики». 2-е изд. (эл.). М. : Изд. дом Высшей школы экономики.

Лефевр, А. (2015). Производство пространства. М.: Streike Press.

Махонина, С. Я. (2011). *История русской журналистики начала XX века* (сс. 240-240). Общество с ограниченной ответственностью ФЛИНТА.

Росницкий, Н. (1926). Лицо деревни. По материалам обследования 28 волостей и 32730 крестьянских хозяйств Пензенской губернии. *Л.: Гос. изд-во*.

Есин, Б. И. (2008). История русской журналистики XIX века: учебник для студентов вузов, обучающихся по направлению и специальности «Журналистика». *М.: Изд-во МГУ*.

Hjarvard, S. (2008). The mediatization of society. *Nordicom review*, *29*(2).

McChesney, R. W. (2016). *Rich media, poor democracy: Communication politics in dubious times*. New Press.

Thompson, John B (1990), Ideology and Modern Culture. Cambridge: Polity Press.

Thompson, John B. (1995), The Media and Modernity: A Social Theory of the Media. Cambridge: Polity Press.

REFERENCE LIST

David Ananu, (1916): Social'noe razvitie rossijskih armyan *(Social development of Russian Armenians)* (1800-1870), pervyj tom, Bagu, Trud.

Istoriya Armenii, *(History of Armenia*) (2015) pod redakciej V. Barhudaryana, tom tretij, novyj period, kniga vtoraya, Erevan, izdatel'stvo «Zangak».

Istoriya armyanskoj periodicheskoj pechati XVIII-XIX vekov, *(History of Armenian periodical press of the 17th-20th centuries)* (2006), tom 1, Kair.

Develop (15.VIII.1874), 32.

Develop (8.XI.1878), 192.

Razviva (6.XI.1897), 104.

Development (2.XII.1897), 141.

Razviva (30.X.1898), 197.

Der-Hachaturyan, Ar., (2014): Bibliograficheskie trudy armyanskoj pressy *(Bibliographic works of the Armenian press),* Bejrut.

Kuznecov, S. V. (1998). Kul'tura russkoj derevni. Ocherki russkoj kul'tury XIX veka *(Culture of the Russian village. Essays on Russian culture of the twentieth century).* M.: izd. Moskovskij universitet. (1).

Kiriya, I. V. (2018). Istoriya i teoriya media *(History and Theory of Media*) [Elektronnyj resurs]: uchebnik dlya uzov / Kiriya I. V., Novikova A. A. Nacional'nyj issledovat' Universitet «Vysshaya shkola ekonomiki». 2-e izd. (e.). M. : Izd. dom Vysshej shkoly ekonomiki.

Lefevr, A. (2015). Proizvodstvennoe pomeshchenie *(Production premises).* M.: Strajk Press.

Mahonina, S. YA. (2011). Istoriya russkoj zhurnalistiki nachala XX veka *(History of Russian journalism at the beginning of the 20th century)* (ok. 240-240). FLINTA.

Rosnickij, N. (1926). Lico derevni. Po materialam obsledovaniya 28 volostej i 32730 krest'yanskih dvorov Penzenskoj gubernii (*The face of the village. Based on the survey of 28 volosts and 32,730 peasant households in the Penza province).* L.: Gos. izd-vo.

Esin, B. I. (2008). Istoriya russkoj zhurnalistiki XIX veka *(History of Russian journalism of the 20th century).* uchebnik dlya sudentov uzov, uchastkovyh programm i special'nostej "Hurnalistika". M.: Izd-vo MGU.

Hjarvard, S. (2008). The mediatization of society. *Nordicom review*, *29*(2).

McChesney, R. W. (2016). *Rich media, poor democracy: Communication politics in dubious times*. New Press.

Thompson, John B (1990), Ideology and Modern Culture. Cambridge: Polity Press.

Thompson, John B. (1995), The Media and Modernity: A Social Theory of the Media. Cambridge: Polity Press.

РЕЗЮМЕ

ГАЗЕТА «МШАК» КАК ИСТОЧНИК ПОВСЕДНЕВОСТИ СЕЛЬСКОГО САМОУПРАВЛЕНИЯ (НА ПРЕМЬЕРЕ ГАЗАХСКОГО УЕЗДА ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ)

ВЛАДИМИР ПОГОСЯН

В конце XIX и начале XX века в Российской Империи происходили не только общественно-политические изменения, но и существенные преобразования в повседневной жизни. В данной статье мы постарались исследовать особенности самоуправления армян в Газахском уезде Елизаветпольской губернии, основываясь на информации, опубликованной в газете «Мшак».

«Мшак» был самым авторитетным и широко распространённым печатным изданием того времени. Он служил не только источником информации, но и трибуной, на которой кавказские армяне могли поделиться своими достижениями и значимыми событиями. Эта газета стала голосом провинциальных армян, а письма и заметки, опубликованные в её выпусках, представляют собой ценный материал для изучения повседневной жизни и краеведения армян Кавказа того периода.

Объектом нашего исследования являются армянонаселенные села Газахского уезда конца XIX - начала XX веков, а предметом - повседневные проблемы, связанные с особенностями системы самоуправления, выборами и назначением должностных лиц в селах, где проживали газахские армяне. Наша цель - проанализировать и оценить, как система самоуправления функционировала в этот период.

Исследование направлено на глубокое понимание повседневной жизни системы сельского самоуправления у казахстанских армян. Мы особенно выделили важность газеты «Мшак» как источника информации. Цель работы - выявить местные особенности организации органов самоуправления, а также узнать, как местное сообщество относилось к ним и насколько активно участвовало в выборных процессах.

Система сельского самоуправления и связанные с ней события отражали политические и экономические условия того времени. Сельские собрания, безусловно, оказывали значительное влияние на повседневную жизнь села, поскольку именно они формировали все уровни самоуправления общины и принимали ключевые решения. Исследование показывает, что повседневная жизнь села вращалась вокруг главных чиновников - сельского старосты и его

аппарата. От эффективности их работы зависело отношение общества к сельским собраниям и избранным должностным лицам.

***Ключевые слова**: повседневность, сельская община, сельское общество, средства массовой информации, «Мшак», органы самоуправления, микроистория.*

ABSTRACT

"MSHAK" NEWSPAPER AS A SOURCE OF DAILY RURAL SELF-GOVERNMENT (AT THE EXAMPLE OF GAZAKH DISTRICT OF ELIZAVETPOL PROVINCE)

VLADIMIR POGHOSYAN

At the end of the XIX and the beginning of the XX century, not only socio-political changes took place in the Russian Empire, but also significant transformations in everyday life. In this article, we have tried to explore the peculiarities of Armenian self-government in Gazakh district of Elizavetpol province, based on information published in the newspaper "Mshak".

"Mshak" was the most authoritative and widely distributed print publication of that time. It served not only as a source of information, but also as a platform where Caucasian Armenians could share their achievements and significant events. This newspaper became the voice of provincial Armenians, and the letters and notes published in its issues are valuable material for studying the daily life and local history of the Armenians of the Caucasus of that period.

The object of our research is the Armenian-populated villages of Gazakh county in the late XIX - early XX centuries, and the subject is everyday problems related to the peculiarities of the self-government system, elections and appointment of officials in villages where Gazakh Armenians lived. Our goal is to analyze and evaluate how the self-government system functioned during this period.

The research is aimed at a deep understanding of the daily life of the rural self-government system among Kazakh Armenians. We especially highlighted the importance of the newspaper "Mshak" as a source of information. The purpose of the work is to identify local peculiarities of the organization of self-government bodies, as well as to find out how the local community treated them and how actively it participated in the electoral processes.

The system of rural self-government and related events reflected the political and economic conditions of that time. Village assemblies certainly had a significant impact on the daily life of the village, since they formed all levels of community self-government and made key decisions. The study shows that the daily life of the village revolved around the main officials - the village head and his staff. The public's attitude towards village assemblies and elected officials depended on the effectiveness of their work.

Keywords: *everyday life, rural community, rural society, mass media, "Mshak", self-government bodies, microhistory.*

Հոդվածը ստացվել է՝ 11.08. 2024
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 17.08. 2024
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 19.10.2024